



ԲՈՐՈՅՆԿԱՆ, ՌԻՍՈՒՄՆԿԱՆ, ԸՐՈՒՆՍՏԳԻՏՆԿԱՆ

Ե. ՅԱՐԻ 1891

Ցարնկան 10 ֆր. ոսկի — 4 ռր. :
Հեցումնեսյ 6 ֆր. ոսկի — 2 ռր. 50 կ. :
Մեկ թիւ կ'ալժե 1 ֆր. — 50 կոպ. :

ԹԻՒ 5 ՄԱՅԻՍ

ՈՒՍՈՒՄՆԵՐԸ

ԳՊՐՈՑԱԿԱՆ

ՌԻՍՈՒՄՆԵՐԻ ԳՊՐՈՑՆԵՐԻ Ե ԿՆԻՎԱՆ

Բ.

ԱՐԱԿԱՆ ՍՏՈՒ ՌԻՍՈՒՄՆԵՐԵՆԵՐԻ

(Հարմար է լինում է- ժրել.)



Յ. Ֆրադայիս
գլխավորներ:

Նոգնանուր անուամբ
«Քաղաքային» կը
կոչուին այն գլխավոր-
ներն, որոնք քաղա-
քային վարչութիւն-
ներէ են հիմնուած,
զանազանելու համար
աւելի ստորին գլխա-
ւորներն, որոնք «գիւ-

ղային» կամ «գաղաքատեղական» կը կոչուին:
Առ հասարակ քաղաքային գլխավորներու նպա-
տանն է աշակերտաց սկզբնական մտաւոր դար-
գացումն եւ բարոյական-կրօնական կրթութիւն
տալ: Սոքա վեց բաժանում ունին՝ իրաքան-
չիւրը միամեայ դասընթացով: Քանի մի հատը

(յատկապէս 12ը) գաղաքատեղական բաժիններ
ալ ունին: Եւթը տարեկան աշակերտներն ուղ-
ղակի կ'ընդունուին գաղաքատեղական բա-
ժանմունքը: Իսկ 10—14 տարեկաններէն կը
պահանջուի ճէրմական աղօթքը, շին եւ նոր
կտակարանի կարեւորագոյն անցքերը գիտնալ,
եւ առանքէն կարգալ, գրեւ ու համրել: Ոչ-
առաջագան տղաք կրօնական նիւթոց ընե-
թիւն տալու պարտական չեն: 10—13 տա-
րեկան տղաք երբ քաղաքային գլխաւորն առա-
ջին 4 տարուց ընթացքը յաջողութեամբ կատա-
րեն՝ առանց ընեթութեան կ'ընդունուին գիմնասիոնի
կամ ընթացական վարժարանի առաջին դասարանը:
Իսկ ամբողջ գլխաւորական ընթացքը կատարողը
կարող է ընդունուիլ Տփղիսի վարժապետանոցի
առաջին դասարանը: Սովորաբար աշակերտները
քաղաքային ուսումնարանը չկատարած՝ կ'անց-
նին գիմնասիոն, կամ ուրիշ միջնակարգ վար-
ժարան, — ի հարկէ որոնք որ իրենց ուսումը
շարունակելու հնարաւորութիւն ունեն:

Քաղաքային գլխավորներուն ուսման ծրա-
գիրն է՝

1. Կրօն,
2. Ռուսաց լեզու,
3. Թուաբա-
նութիւն,
4. Երկրաչափութիւն,
5. Պատմու-
թիւն Ռուսաց եւ ընդհանուր,
6. Բնական գաղա-
մութիւն,
7. Բնագիտութիւն,
8. Աշխարհա-
գրութիւն,
9. Գծագրութիւն եւ մաթեմատիկա
թիւն: — Իսկ այն տեղերն՝ ուր տեղացիք, այս-
ինքն Վրացիք, Հայք, Թուրքեր բազմամիւ են,
կ'աւանդուին նաեւ տեղական լեզուներ: Հայ-

ոց լեզուն եւ կրօնը կ'աւանդուի իբրեւ ծրագրի մաս՝ հետեւեալ քաղաքացի դպրոցներու մէջ. Տփղիս, Գորի, Թելաւ, Ախալցխա, Գանձակ, Շուշա, Նուխա, Նախիջիւան, Բաքու, Էւմաիի, Դերբենդ, Մոզդոկ, Ախալքալաքի, Ալեքսանդրոպոլ, Նոր-Բայազդի եւ Կարս, ուր խմբովին կան շայիւր: Կարսի քաղաքային դպրոցը միակն է՝ ուր կ'աւանդուի նոր յունարէն. եւ այս վերջին ուսուսանողական պատերազմէն ետեւ Կարսի նահանգը գաղթած յոյն գիւղացւոց համար:

Այս դպրոցներու ստուար մի մասին կից հաստատուած են նաեւ արուեստանոցներ, ուր աշակերտները զանազան արուեստներու մէջ կը վարժին, ինչպէս հիւսնութիւն, գարբնութիւն, լծղովակագմութիւն, երկաթագործութիւն, պարտիզպանութիւն, մետաքսագործութիւն, երաժշտութիւն եւ այլն, ըստ արդիւնաբերութեան եւ պիտոյից իւրաքանչիւր տեղւոյ՝ ուր հիմնուած է դպրոցը: Երկու քաղաքային դպրոց միայն, այսինքն Զարաթաշայի եւ Շուշայի, գիշերօթիկներ (pensionnaire) կ'ընդունուին. եւ այն՝ յատկապէս պատուաւոր դասակարգի ծնունդ չբաւար տղայոց համար: Քաղաքային դպրոցներու տարեկան ուսման վճարքն է՝ ըստ տեղւոյն՝ 4 մինչեւ 16 ռուբլ: Բայց քաղաքներու (cosaque) տորոցմ վճարք աւանդուին չ'աւանդուի:

Քաղաքային դպրոցներն ամէն տեղ միեւնոյն դիմըը չունին. կան 4, 3 մինչեւ 2 հիմնական դասարան ունեցողներ (չհաշուելով պատրաստողական դասարանները), այս կարգը դրուած է՝ իրենց գտնուած քաղաքացի կարեւորութեան համեմատ:

Զորեկաւորներու դպրոցներ հիմնուած են հետեւեալ քաղաքները կամ քանի մի գլխաւոր գիւղերը: 1. Եյսք, 2. Բատալ Բաշի, (այստեղ են քողաք աշակերտները) 3. Ստաւրոպոլ, 4. Վլատիկաւկա 5. Գորի, 6. Ախալցխա, 7. Ախալքալաքի, 8. Զաքաթալա, եւ 9. Փոթի:

Ընդ ամենն 9 հատ:

Երկրաւորներու. 1. Մայկոպ, 2. Տեմիւրկ (բորոյովին ձրի. աշակերտները մեծաւ մասամբ հրեայ եւ ուսու են) 3. Վնապ, 4. Մոզդոկ, 5. Գեորգիեմսկ, 6. Պետաիգորսկ, 7. Տփղիս, 8. Թելաւ, 9. Սընախ, 10. Քութայիս, 11. Օզուրգէթ, 12. Բաթում, 13. Գանձակ, 14. Շուշա, 15. Նուխա, 16. Ալեքսանդրոպոլ, 17. Նախիջիւան, 18. Կարս, 19. Բաքու (նոյնպէս ձրի. աշակերտներու մեծ մասը մահմետական են.)

20. Էւմաիի, 21. Դերբենդ. եւ հատ մ'ալ Տփղիսի Աղքատներու վարժարաններին կից:

Ընդ ամենն 22 հատ:

Երկրաւորներու. 1. Ղզար եւ 2. Նոր-Բայազդ:

Ընդ ամենն 2 հատ:

7. Լեռնային դպրոցներ:

Այս դպրոցները «Լեռնային» կը կոչուին՝ վասն զի հիմնուած են կաւկասեան բարձրագուտներու վրայ քնակող լեռնականաց համար: Այս դպրոցները մեծ կարեւորութիւն ունին այն վայրագ եւ այլեւայլ մանր ցեղերու բաժնուած լեռնորդեպալը կրթելու եւ նոցա մէջ ուսուսկան քաղաքակրթութիւնը տարածելու համար:

Լեռնային դպրոցներուն ուսմանց ծրագիրն ըստ ինքեան նոյն է երկրաստարանեան գիւղային դպրոցներու ծրագրին հետ: Անոնցմէ ոմանք 3 դասարան ունին եւ ոմանք 2, որոնց կից հաստատուած են նաեւ պատրաստողական բաժնամուտք: Բաց ի դպրոցական ծրագրէն, զոր ամեն աշակերտ պարտաւոր է անցնելու, կ'աւանդուին նաեւ հետեւեալ առարկաները, որոնց ուսումն կամուար է կամ ազատ. երգեցողութիւն, պարտիզպանութիւն, հիւսնութիւն եւ այլն, ըստ պիտոյից տեղւոյն ուր հիմնուած է դպրոցը:

Երեքդասարանեան դպրոց կայ մէկ հատ ի Նախի:

Երկրաստարանեան դպրոց կայ 1. Գորդիս, 2. Մայկոպ, 3. Սուխում:

Միդաստարանեան դպրոց մէկ հատ ի Նազրանով:

Ընդ ամենն 5 հատ:

Երբ առաջին անգամ հիմնուեցան այս դպրոցները՝ կառավարութիւնն ոչ միայն վճարք չէր առնուր աշակերտներէն, այլ ինքը կը հոգար մասամբ նոցա ապրուստը՝ ձրի: Այժմ կ'առնուի տարեկան 3 մինչեւ 6 ռուբլ: Դպրոցներուն բոլորն ալ գիշերօթիկ կ'ընդունին 9—15 տարեկան, 75էն մինչեւ 120 ռուբլ վճարքով:

8. Արդիւնաւոր դպրոցներ:

Այս դպրոցներու նպատակն է աշակերտաց մուտքը զարգացման հետ միասին զանազան արուեստից գործնական ուսմունք աւանդել: Սոքա հիմնուած են գլխաւորաբար անոնց համար որ արուեստից այս կամ այն ձիւղը կ'ընտրեն իրենց մշտական պարապմունք: Այս դպրոցներու բաւական հոգ կը տարուի. եւ աշակերտներն ոչ միայն հասարակ արուեստաւոր՝ այլ եւ

կէս կամ փոքր-վարպետ կ'ենլեն: Այսպիսի 8 դպրոց կայ Կաւկասիոյ մէջ՝ Տնտեսալ տեղերը:

1. Բաթում, տարեկան վճարք 6 ռուբլ:
2. Տփլիս, ձրի:
3. Վլատիկաւկաս, 25 ռբլ. իսկ գիշերօթիկ՝ 120 ռուբլ:
4. Ստաւրոպոլ, տար. վճարք 3 ռբլ.
5. Գանձակ, տար. վճարք 12 ռբլ. գիշերօթիկ՝ 100 ռբլ.

6. Բաքու, տար. վճարք 10 ռբլ. գիշերօթիկ՝ 100 ռբլ.

7. Զաքաթալա, տար. վճարք 24 ռբլ. գիշերօթիկ՝ 100 ռբլ.

8. Սիսալթա, տար. վճարք 10 ռբլ. — Աշակերտներ կ'ընդունուին 11 մինչեւ 14 տարեկան:

Աւանդուած արուեստներն ամէն տեղ միեւնոյն չեն: Ամէն մի գաւառ ունի իւր արուեստներն, որոնք աւելի կրճադղին այն տեղ, քան ուրիշ գաւառ: Կան սակայն այնպիսի արուեստներ, որ ընդհանուր եւ ամէն տեղ կ'աւանդուին. ինչպէս հիւանդութիւն, զարբնութիւն, մետաղաձուլութիւն: Միւս արուեստներն են՝ պարտիզպանութիւն, մեղաբուծութիւն, եւ այլն:

Այս դպրոցներուն ընթացքն ու ծրագիրն ամէն տեղ միեւնոյն չէ: Ուսման 6, ուսման 5 եւ ուսման 4 եւ 3 տարւոյ ընթացք ունին: Տրփլիսի «Արուեստից դպրոցն» այն առանձնութիւնն ունի, որ բաց ի ռուսերէնէն, պատմութիւնէն ու աշխարհագրութիւնէն՝ միւս բոլոր ուսման աւարկաներն եւ բուն արուեստներն երէք լեզուաւ ալ կ'աւանդուին, այսինքն հայ աշակերտաց՝ հայերէն, վրացի աշակերտաց՝ վրացերէն, եւ ռուս աշակերտաց՝ ռուսերէն:

Այս դպրոցաց մեծ մասին ծախքը քաղաքային արկղէն կը հոգացուի, եւ ոչ պետական գանձարանէն: Բաքուի արուեստից դպրոցն հիմնուած է յանուն Աղէքսանդր Բ Կայսերի, եւ Վլատիկաւկասիւնը յանուն Լորիս Մելիքեան Կոմսին:

Արուեստից դպրոցը կ'ընդունուի այն աշակերտն որ որեւէ պատրաստողական դպրոցի վկայագիր ունի:

9. Ժողովական դպրոցներ:

Այս դպրոցները բացուած են յատկապէս նաւաղներու համար՝ ինչ տարիք որ ունենան, որոնք փոքր ի շատեւ ընդհանուր մասնորական զարգացում մ'աւանձ՝ եւ պատշաճաւոր մասնագիտական ուսումն ստացած՝ կարող են նաւաղիղ

(pilote, штурманъ) լինել եւ առեւտրական առագաստաւոր նաւի նաւապետ՝ շեփեր (шкперъ):

Դպրոցին ծրագիրն է՝ Թուաբանութիւն, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն եւ ռուսերէն, որոնց կից կ'աւանդուին նաւապետութեան վերաբերեալ ծանօթութիւններ:

Այսպիսի 3 դպրոց կայ Կաւկասիոյ մէջ, Փոթի, Անապա եւ Բաքու, որոնց երեքն ալ ծովեզերեայ քաղաք են:

Անապայի եւ Բաքուի դպրոցները կը բաղկանան մէկ նաւաղական դասարանէ՝ 3 բաժանմունքով. իսկ Փոթիինը 2 դասարան ունի զատ զատ՝ 1. Նաւաղական եւ 2. Նաւապետական (առագաստաւոր նաւի), իրենց բաժանմունքով:

Դպրոցական տարին է՝ Նոյեմբերի կէսէն մինչեւ Մարտ 1:

Այս դպրոցները բոլորովին ձրի են:

10. Գիւղական դպրոցներ:

Այս դպրոցներն, որ «Վկջնական» ալ կը կոչուին, հաստատուած են գիւղական հասարակութեան համար, նպատակ ունենալով հաստատել ժողովրդեան մէջ կրօնական եւ բարոյական սկզբունքներ, սովորեցնել պարզ գրել եւ կարդալ, եւ միանգամայն ուսմանց սկզբնական կարեւոր ծանօթութիւններ տարածել:

Բնականաբար ամէնէն բազմաթիւ դպրոցները սոքա են: Բովանդակ Կաւկասիոյ մէջ 880 այսպէս պատրաստողական դպրոցներ կան, որոնցմէ 101ը 2 դասարանով են եւ 779ը 1 դասարանով: Այս դպրոցներուն ամէնքն արական սեռի համար չեն, այլ կան նաեւ իգական սեռի համար: Կան նմանապէս խառն, երկու սեռի համար միանգամայն: Համեմատական թիւը հետեւեալ ցուցակէս կ'երեւայ:

Միջառարեւելեան Եւրոպայի	Եւրոպայի	Գումար
Արակ. 209	դպրոց 55	= 264 դպր.
Իգակ. 43	11	= 54 "
Խառն. 527	35	= 562 "
779 դպրոց	101	= 880 դպր.

Այս դպրոցներու ծրագիրն հետեւեալն է:

Ա. Միջառարեւելեան: 1. Կրօն, (այն գաւառութեան, որուն կը վերաբերի տեղւոյն հասարակութեան, կամ որ նոյն է՝ աշակերտաց մեծագոյն մասը): 2. Ռուսերէն, — ընթերցանութիւն, գրութիւն եւ խօսակցութիւն: 3. Ընթերցանութիւն եւ գրութիւն անգլական լեզուով: 4. Թուաբանութիւն, — առաջին շորս գործողութիւնք:

Բ. Երկրաչափական: Բացի վերոգրեալներիցն՝ Համառոտ սրբազան պատմութիւն, գործնական ծանօթութիւն ուստերէն քերականութեան, թուաբանութիւն, կոորդինէնքն եւ Ռուսաստանի Համառոտ աշխարհագրութիւն:

Ասկէ զատ՝ 593 դպրոցի մէջ երգեցողութեան դաս կը տրուի, 536ի մէջ մարմնավարութիւն եւ 569ի մէջ զանազան արուեստներ, ինչպէս ձեռագործ (181 դպրոցի մէջ) հիւսնութիւն, թղթակազմութիւն, ձեռնոց (gants) շինել, պարտիզպանութիւն, մեղաբարձութիւն, շերամապահութիւն, եւ այլն:

Պատրաստողական դպրոցներու մէջ կ'ընդունուին տղայք 7 տարեկանէն ոչ վար: 880 դպրոցներէն միայն 400ի մէջ մուծուած են աշակերտական թղթակներ, որոնց միջինն է 3 ռուբլ տարեկան: — 5 դպրոց միայն գիշերօթիկ կ'ընդունին, միւսներն ընդուն ալ ցերեկեայ են:

11. Երկրաչափական դպրոց:

Միայն մի Հատ երկրաչափական դպրոց կայ, եւ այն՝ Տփլիսի մէջ, ուր աշակերտներն ուսումն յաջող աւարտելով կ'ընդունին «Մասնաւոր երկրաչափ» տիտղոսը:

Այս դպրոցն 3 դասարան ունի տարեկան ընթացքով: Կ'ընդունին 15 մինչեւ 19 տարեկան պատանիներ: Բայց կարող են ընդունիլ մինչեւ 25 տարեկան երիտասարդները, երբ ընդունելութեան յաջող քննութիւն տան, եւ զընդունելութիւնը յատկապէս խնդրէ դպրոցական կառավարութիւնէն: — Տարեկան թիւը 20 ռուբլ:

Այն աշակերտներն, որոնք յաջողապէս կ'աւարտեն եւ կ'ուզեն իրենց ուսումն շարունակել նոյն Ֆիզիկական բարձրագոյն վարժարանին մէջ, կ'ուղարկուին արբունի ծախիւք Մոսկուայի կոստանդինեան Երկրաչափական ձեմբարանը, որ պարտաւոր է կաւկասցի որդեգիրներ (stipendiaries) ընդունիլ:

12. Պարտիզպանութեան դպրոց:

Այսպիսի մի դպրոց կայ Տփլիսի մէջ, որուն նպատակն է աշակերտներու ծանօթացնել պարտիզպանութիւնը — գլխաւորաբար գործնական տեսակետով: — 2 պատրաստողական եւ 3 մասնագիտական դասեր ունի:

Աշակերտները կ'ընդունուին 14 տարեկանէն ոչ պակաս: Դպրոցական տարին է Հոկտ. 15էն մինչեւ Մարտ 15: Տեսական դասերը 3 ժամ միայն կը տւեն. օրուան միւս ժամերը նուիրուած են գործնական դասերուն: — Դպրոց-

ցին կից ընդարձակ պարտէզ է շինուած, ուր աշակերտները պարտիզպանութեան ամէն տեսակ արգիւնաբերութեան անձամբ կը զբաղին:

Տփլիսի Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութիւնը 10 որդեգիր ունի այս դպրոցի մէջ: Իսկ թղթակաղթներէն գիշերօթիկները կը վճարեն 120 ռուբլ տարեկան, կիսաթղթակները 35 ռուբլ: Ցերեկեայք ուսման Համար ունենալ կը վճարեն:

Այս դպրոցը յաջողութեամբ աւարտող աշակերտը կ'ընդունի «Ուսեալ պարտիզպան» կոչումը:

13. Ամառագիտական դպրոց:

Այսպիսի քաղաքն է Հաստատուած այս դպրոցն որ 2 մասնագիտական դասարան ունի, տարեկան դասընթացքով: Կ'ընդունուին աշակերտներ 16 տարեկանէն ոչ փոքր, որոնք գիւղային երկրատարանեան դպրոցն աւարտած են:

Անտառագիտական դպրոցի ծրագիրն է՝ Ռուսերէն լեզու, թուաբանութիւն, բնական պատմութիւն, անտառային արգիւնաբերութիւն իւր զանազան ձիւղերով, անտառային օրէնք, Հողաչափութիւն (géodésie), շինուածական արուեստ եւ գծագրութիւն: Աշակերտները Սեպտեմբերէն մինչեւ Ապրիլ՝ տնական դասերով կը պարապին. իսկ Ապրիլէն մինչեւ Օգոստոս՝ գործնական: Ամբողջ դասընթացքն յաջողապէս աւարտողները կ'ընդունին «Անտառային Հողաչափ» տիտղոսը:

Այս դպրոցն ընդ ամէնը 15 աշակերտ միայն կ'ընդունի, որոնց 10ն արբունի ծախիւք կ'ուսանին. իսկ 5ը տեղական ծախքով՝ տարեկան 150 ռուբլ վճարելով (գիշերօթիկ):

14. Զինուորական դպրոցներ:

Առհասարակ երեք զինուորական դպրոց կայ:

Ա. Տփլիսի մէջ՝ Աշտուական տղայոց (cadets) վարժարանը, (кадетский корпус) որ եօթ տարեկան զարթնեցող ունի, զոր աւարտողներն աւելի բարձր զինուորական վարժարաններ կ'անցնին: Իսկ որոնք չեն ուզեր շարունակել՝ իրանոնք ունին բանակի մէջ իրեն ստորին պաշտօնակալ (officier) ընդունուելու եւ կարող են յառաջագրել:

Աշտուական ուղիս՝ սակեւով՝ կ'իմացունի հետեւեալ անձանց որդիքը. 1. Բոլոր բանակի պաշտօնակալաց (officiers), 2. Զինուորական եւ քաղաքային պաշտօնատեւար (fonctionnaires) — եթէ միայն այս վերջին կարգի անձնք ժա-

ռանգական անշուշտական լինան կը վերաբերին, — եւ 3. Ժառանգական անշուշտական լինում, որոնք պետական պաշտօնի մէջ չեն գտնուիր: Այս մարդկան որդիքը միայն իրաւունք ունին իրենց ծախիւնքը մտնելու այն վարժարանը՝ տարեկան 450 ռուբլ վճարելով: Յիշեալ կարգի պատանիներէ կ'ընդունուին նաեւ ցորեկօթիկներ 25 ռուբլ ուսման վարձ վճարելով. այսպիսիք լինէ 4 դասարանն յաջորդական մը անցին, այնուհետեւ կը համարուին արքունի հաշուով ուսանող, եւ կը վճարեն 200 ռուբլ տարեկան:

Որպէս զի անշուշտական տղայք ղընուորական վարժարանն ընդունուին, որոշ ծրագրի համեմատ պէտք են քննութիւն տալ հետեւեալ առարկաներու. 1. Կրօն, 2. Ռուսերէն լեզու, 3. Թուաբանութիւն, 4. Գեղագրութիւն, 5. Գաղղերէն, 6. Աշխարհագրութիւն եւ 7. Գծագրութիւն:

Բ. եւ Գ. Եռեկէրներու վարժարան (юнкерское училище):

Երկու այսպիսի վարժարան կայ, այն է՝ Ի Տփղիս եւ Ի Ստաւրոպոլ:

Այս վարժարանն կ'ընեն նոյնպէս բանակի պաշտօնականներ. առ հասարակ կաւանան պաշտօնականներու մեծ մասն այս տեղ են առած իրենց ղընուորական ուսումը: Ներկայիս միջոց ունեցողները պաշտօնական լինան աստիճանի մէջ ալ իրաւունք ունին ուսումը շարունակելու աւելի բարձրագոյն ղընուորական վարժարանի մէջ: Ամեն դասակարգի տղայք կարող են այս վարժարանները մտնել, բաւական որ յաջող քննութիւն տան, որոշեալ ծրագրին համեմատ հետեւեալ առարկաներուն. 1. Կրօն, 2. Ռուսերէն լեզու, 3. Թուաբանութիւն, 4. Երկրաչափութիւն կամ Գրահաշիւ, 5. Աշխարհագրութիւն եւ 6. Պատմութիւն:

15. Երկրամիջոցային վարժարան:

Այսպիսի մի դպրոց կայ Ի Տփղիս, որ կը կոչուի « Միջայլիւն » (յանուն հիմնադրին, որ է Կաւկասիոյ նախկին փոխարքայ Միքայէլ Մեծ-դուքս): Երկրամիջոցային վարժարանը կը պատրաստէ երկրամիջոցային պաշտօններուն համար արուեստագէտներ, ինչպէս մեքենավար (machiniste) եւ ատոր օգնականներ եւն: Վարժարանի դասընթացը 3 տարի է, եւ դարձեալ հարկաւոր է 2 տարի ալ երկրամիջոց գործող մէջ գործնականապէս մարդիկ: Ուսմանց ծրագիրն է, 1. Կրօն, 2. Թուաբանութիւն, 3. Երկրաչափութիւն

(géométrie), 4. Գեոմետրիա (арпентаге), 5. Բնագիտութիւն, 6. Հեռագրութիւն, 7. Մեքենագիտութիւն, 8. Գծագրութիւն եւ 9. Երկրամիջոցային հաշուակալութիւն: Գործնականապէս կ'աւանդուի նաեւ դարբնութիւն, հիսնութիւն եւ երկրամագործութիւն:

Այս վարժարանն ընդունուելու համար պէտք է քննութիւն տալ, կամ ունենալ վկայագիր դիւլպային կամ քաղաքային երկրաարանան զպրոցի: Աշակերտաց տարիքը պիտի լինի 14—17 տարեկան: Ուսումնաւարձն է տարեկան 10 ռուբլ: Գիշերօթիկները կը վճարեն 15 ռուբլ. ամիսը. իսկ կիսամոնախները (կէսօրն այնտեղ ճաշողները) ամիսը 5 ռուբլ միայն:

16. Բժշկական դպրոց:

Այս վարժարանն, որ հիմնուած է Ի Տփղիս, կը պատրաստէ վիրաբուժի օգնականներ (aide-chirurgien, фельдшер): Ուսման ընթացքը չորս տարի է: Վերջին չորրորդ դասարանի աշակերտները գործնական վիրաբուժական պարպումներ ունին:

Աւանդուած առարկաներն են 1. Կրօն, 2. Ռուսերէն, 3. Լատներէն, 4. Հայերէն, 5. Վրացերէն, 6. Թուրքերէն, 7. Թուաբանութիւն, 8. Աշխարհագրութիւն, 9. Պատմութիւն, 10. Անգլա-ֆրանսէս լեզու, 11. Վիրաբուժութիւն, 12. Առողջաբանութիւն, 13. Գեղագրութիւն եւ 14. Գեղագրութիւն:

Աշակերտները կ'ընդունուին 12—16 տարեկան, որոնցմէ կը պահանջուի միայն, որ ուսերէն կարդալ, գրել եւ խօսիլ գիտնան: Գպրոցական վճարքն է տարեկան 6 ռուբլ եւ դարձեալ միանուագ 12 ռուբլ: Քաղաքային դպրոցն աւարտողներն երրորդ դասարանը կ'ընդունուին առանց քննութեան: Այստեղ եւս կան արքունի ծախիւք ուսանողներ:

17. Արհեստական դպրոց:

Այս ըստ ինքեան պատրաստողական դպրոց մի է, հիմնուած յատկապէս անշուշտական տղայքը (մեծաւ մասամբ Վրաց, որոնց մէջ ամենէն շատ են անշուշտականը) միւս վարժարաններու առաջին, երկրորդ եւ երրորդ դասարանները մտնելու պատրաստութեան համար: Վրացերէն այստեղ պարտաւորեալ է: Գպրոցը վրացի անշուշտականներն են հաստատած: Գիշերօթիկները տարեկան կը վճարեն 200 ռուբլ. կան նաեւ կիսամոնախներ: Ցերեկեայք 12 ռուբլ. կը վճարեն:

Գ.

Ի Գ Վ Կ Ն Ս Ե Ռ Ի Ռ Ի Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն Ն Ե Ր

1. Յրիորդաց անմարմն:

Պաւկասիոյ Օրիորդաց ձեմարանը (Завказский Дѣвичій Институтъ) Տիմուած է ի Տըփղիս, ուր աւարտող աշակերտուհիք «Տնական դաստիարակուհի» (домашняя наставница) կոչումը կ'ընդունին: Այս վարժարանին մուտքը բաց է ամենուն, ի բաց առեալ Հասարակ դասակարգն, որ գլխահարկ կը վճարէ տէրութեան:

Օրիորդաց ձեմարանն 7 դասարան ունի, 7 տարւոյ դասընթացով եւ հետեւեալ ծրագրով:

Ա. Պարտաւորութիւն: 1. Կրօն, 2. Ռուսերէն, 3. Գերմաներէն եւ Գաղղիերէն, 4. Մանկավարժութիւն, 5. Ռուսաց եւ ընդհանուր պատմութիւն, 6. Աշխարհագրութիւն, 7. Գրահաշիւ, 8. Երկրաչափութիւն, 9. Բնագիտութիւն, 10. Բնական պատմութիւն, 11. Գծագրութիւն, 12. Վայելչագրութիւն, 13. Երգեցողութիւն (սմբուլիւն, en choeur) 14. Կարճ եւ Մարմնավարժութիւն, 15. Ձեռագործ եւ Տնտեսութիւն:

Բ. Կամաւոր: 1. Տեղական լեզուներ, եւ 2. Երաժշտութիւն:

Ցարեկան վճարքն է գիշերօթիկներու համար 300 ռուբլ, եւ Երաժշտութեան համար առանձին՝ 70 ռուբլ: 8—10 տարեկան աղջիկներ, որոնք ոչինչ գիտեն, կ'ընդունուին պատրաստողական դասարան:

2. Մարիամնան ուսուցանարան:

Այս վարժարաններն եւս փոքր տարբերութեամբ միեւնոյն ուղղութիւնն ու ծրագիրն ունին, ինչ որ վերոյիշեալ ձեմարանը: «Մարիամեան» անունը կը կրեն, վասն զի Տիմուած են յանուն «Մարիա», կայսրուհւոյն Ռուսաց:

Երեք այսպիսի ուսումնարան կայ Կաւկասիոյ մէջ, այն է՝ 1. Բաթում, 2. Կարս եւ 3. Կուբան:

3. Գիմնասիոն:

Իգական սեռի համար 9 գիմնասիոն կայ Հաստատուած Կաւկասիոյ մէջ: Այն է՝

Տփղիս	3	Հատ	Բուխարսկայա	1	Հատ
Ստաւրոպոլ	2	Ն	Եկատերինոգար	1	Ն
Բաքու	1	Ն	Վլադիկաւկոս	1	Ն

Գիմնասիոնն աշակերտուհեաց ընդհանուր մտաւոր զարգացում կու տայ եւ անկան դաստիարակուհի եւ վարժուհի կը պատրաստէ: Այս վարժարաններն 1 հիմնական եւ 1 պատրաստողական դասարան ունին: Կ'աւանդուին հետեւեալք:

Ա. Պարտաւորութիւն: 1. Կրօն, 2. Ռուսերէն, 3. Մաթեմատիկ իւր ձեւերով, 4. Աշխարհագրութիւն, 5. Պատմութիւն, 6. Բնական պատմութիւն, 7. Բնագիտութիւն, 8. Վայելչագրութիւն եւ 9. Ձեռագործ:

Բ. Կամաւոր: Գաղղիերէն, Գերմաներէն, Հայերէն եւ Վրացերէն, Մարմնամարզութիւն, Կարճ, Գծագրութիւն, Նկարչութիւն յախճապակոյ վրայ, եւ Երգեցողութիւն: Գիշերօթիկներն կ'ուսանին նաեւ Երաժշտութիւն: Կամաւոր աւարկաներու ուսման համար առանձին պէտք է վճարել:

Որոնք որ իրենց դասընթացքն յաջողութեամբ կ'աւարտեն, որուն համար ալ կը տրուի իրենց յատուկ շքադրամ (médaille), կ'ընդունին «Տնական դաստիարակուհի» կոչումը, իսկ որոնք միայն վկայագիր կ'առնուն, «Տնական վարժուհի» կ'անուանուին:

Պատրաստողական դասարանը կ'ընդունի 8—10 տարեկան աշակերտուհի, առանց բնութեան: Իսկ որոնք որ կ'ուզեն հիմնական դասարաններէն մէկուն մէջ ընդունուիլ, պէտք են նոյն դասարանին ուսմանց բնութիւն տալ:

Տփղիսի երկու գիմնասիոններուն մէջ, որ են՝ Ս. Նինայի (Նունայ) անուն նուիրուածն եւ Տիկին Սերպիլէնը, նոր լեզուաց ուսումնուղղակի պատրաստողական դասարանն կը սկսի:

Այս գիմնասիոններու տարեկան վճարքն ամէն աղջիկ միեւնոյն չէ: Ցարեկան ուսման վարձն է 20—60 ռուբլ ըստ տեղւոյն. իսկ գիշերօթիկներունը՝ 100—250 ռուբլ:

4. Պրոգիմնասիոն:

Իգական սեռի աշակերտաց համար 7 պրոգիմնասիոն կայ Հաստատուած Կաւկասիոյ մէջ հետեւեալ տեղերը. Տփղիս, Ալեքսանդրոպոլ, Թիմիւր-Խան-Շուրա, Եյլա, Գորի, Սուխում եւ Երիւան: Առնցմէ Տփղիսինը 5 հիմնական դասարան ունի. Սուխումինը եւ Երիւանինը՝ երեք երեք. իսկ միւսները՝ չորս չորս: Ծրագրիւր միեւնոյն է ինչ որ գիմնասիոններունը՝ մինչեւ 3*, 4* եւ 5* դասարան:

Պրոգրիմասիոններն եւս ունին իրենց պատրաստողական դասարանը: Ցարեկան վճարքն է 20—60 ռուբլ. իսկ գիշերօթիկները կը վճարեն 120—150 ռուբլ.:

5. Սիմոնաթարական վարժարան:

Այս վարժարանն, որ հիմնուած է յատկապէս մանկաբարձ դպեանկներ պատրաստելու, 2 տարւոյ դասընթացք ունի: Աշակերտուհիք կ'ընդունուին 16—30 տարեկան: Աշակերտիչ ցանկացողները պէտք է գիտնան՝ 1. Ռուսերէն լեզուի կանոնաւոր ընթերցանութիւն, գրութիւն եւ խօսակցութիւն, 2. Վատիկներէն կարդայ, 3. Թուաբանութեան առաջին չորս գործողութիւններն ու կոտորակ եւ 4. Կրօնի սովորական գործածական աղօթքները:

Իսկ որոնք որ կ'ուզեն «գիւղային մանկաբարձ» լինել, կարող են առանց քննութեան ընդունուիլ, բայց մէկ տարի աւելի կը մնան վարժարանին մէջ, վերջիլեւալ ծրագրին համեմատ կրթուելու համար:

Յաջողապէս աւարտողներուն կը տրուի «Մանկաբարձ» կամ «Գիւղային մանկաբարձ» կոչումը, եւ սորա իրաւունք կ'ունենան Ռուսաստանի մէջ ամէն տեղ իրենց արուեստը գործադրել: Ռուսաստան վարձն է տարեկան 40 ռուբլ.:

Իգական սեռի պատրաստողական դպրոցներուն վրայ խօսեցանք արդէն՝ մանչ տղայոց դպրոցներու կարգին մէջ:

* * *

Այն յօդուածը չվերջացուցած՝ աւելորդ չենք համարիր յաւելուլ այստեղ այն կէտն՝ թէ այս զանազան վարժարաններու մէջ ուսանողն (արական սեռի կ'ենթագրուի) ինչ իրաւունք կամ արտօնութիւն կը ստանայ զինուորական ծառայութեան մասին. եւ այս այնու մանաւանդ՝ որ 1886էն ի վեր կաւկասիոյ Հայք միւս բնիկ քրիստոնէից հետ եղեմակայ են զինուորագրութեան:

Ա. Կարգի իրաւունք կ'ունենայ (այս իրաւանց մասին քիչ վարը) գիմնասիոնի 6^{րդ} դասարանէն անդին անցնողը, եւ Նրկաբաժնական վարժարանի դասընթացքն աւարտողը:

Գ. Կարգի՝ Գիմնասիոնի, պրոգրիմասիոնի եւ ընդհանրական վարժարաններու 3 դասարանէ աւելին կատարողն, եւ վերաբուժական, երկաթուղային, անտառագիտական, պարտիզպանա-

կան վարժարաններն ու վարժապետանոցն աւարտողները:

Դ. Կարգի՝ 3 դասարանէն պակաս կատարողը, ուսուցչական դպրանոցներու, քաղաքային եւ լեռնային դպրոցներու դասընթացքն ամբողջապէս աւարտողները:

Այս արտօնացեալ կարգերուն իրաւունքներն հետեւեալք են:

Ձեռնորագրութեան կանոնաց համեմատ՝ քուէով զինուոր ընտրուողներն՝ իբրեւ ցամաքային զինուոր, 18 տարի կը ծառայեն. 5 տարի գործնական ծառայութիւն եւ 13 տարի պահեստի: Արդ՝

Ա. Կարգի իրաւունք ունեցողները՝ գործնական ծառայութեան մէջ կը մնան միայն 1 տարի, (Ռուսերը 2 տարի) եւ պահեստի մէջ՝ 17 տարի:

Բ. Կարգի իրաւանց տէրիւր գործնական ծառայութեան մէջ կը մնան 3 տարի, եւ պահեստի՝ 15 տարի:

Գ. Կարգինը՝ գործնական 4 տարի, եւ պահեստի մէջ՝ 14 տարի կը ծառայէ:

Ինչպէս արական, նոյնպէս եւ իգական սեռի ամէն դպրոցներն արժուին ծախիւք չեն պահուիր: Քաղաքային եւ արուեստից դպրոցներու թէ՛ շինութիւնն եւ թէ՛ ծախքերը՝ նոյն դպրոցաց գնուած քաղաքներուն կողմանէ կը հոգանուին: Նոյն իսկ գիմնասիոններու եւ այլ միջնակարգ վարժարանաց մէջ կան այնպիսիներ, որոնց ծախքը քաղաքային վարչութեան կողմանէ կը հոգացուի: Իսկ գիւղային, պատրաստողական դպրոցներու մեծ մասին շինութիւնները գիւղերն իրենք են կառուցած. իսկ անօրինութեան ծախքը կառավարութիւնը կը հոգայ: Մի խօսքով՝ ուսումնարանաց, կրթական խնդրոյ մէջ, ի կաւկաս ժողովուրդն ու կառավարութիւնը ձեռք ձեռքի են առած. եւ այս իւր օգուտներն ունի:

Կ. ՏՐԻՐԵՍՍ

